ԿԱՐԾԻՔ–ԸՆԴԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Աւետիս Լորիսի Գրիգորեանի

«Սոթք գաւառը միջին դարերում ըստ պատմահնագիտական տուեալների՝»

Է.00.03 «Հնագիտութիւն» մասնագիտութեամբ պատմական գիտութիւնների թեկնածուի

աստիճանի հայցման ատենախօսութեան մասին

Սոթքի տարածաշրջանին վերաբերող հետազօտութիւնների կարեւորութիւնը հայագիտութեան համար դժուար է գերագնահատել: Այդ թեման ունի ե՛ւ գիտական, ե՛ւ արդիական-ճանաչողական ու հասարակական-քաղաքական նշանակություն: Չնայած դրան՝ հայագէտները շատ քիչ են զբաղուել նրանով: Այդ պատճառով ատենախօս Աւետիս Գրիգորեանն իր ղեկավարի, որը ճանաչուած հնագէտ Յուսիկ Մելքոնեան է, եւ իր գործընկերների հետ միասին խնդիր են դրել ամենայն ընդգրկմամբ ու խորութեամբ ուսումնասիրել այս կարեւոր հիմնախնդիրը փաստագրական նիւթի ամբողջական հետազօտութեամբ՝ սկսելով պատմական ակունքներից եւ աւարտելով մեր օրերի հնագիտական պեղումներից ի յայտ եկող ուշագրաւ նիւթով: Ատենախօսութիւնն, ըստ էութեան, ամփոփում է այս ուղղութեամբ հեղինակի կատարած ծաւալուն աշխատանքը, որն արտայայտուել է նաեւ նրա՝ արդէն ընթերցողի դատին յանձնուած մէկուկէս տասնեակի չափ հրապարակումներում:

Ներկայացուած աշխատանքն աչքի է ընկնում իր մեծ ծաւալով եւ կուռ կառուցուածքով: Այն բաղկացած է Ներածութիւն-առաջաբանից, երեք գլուխներից, Եզրակացութիւններից, Օգտագործուած սկզբնաղբիւրների ու գրականութեան ցանկից եւ ծաւալուն Յաւելուածներից՝ բնագրեր, քարտէզներ ու աղիւսակներ:

Ատենախօսութեան շօշափած խնդիրների լուծման հրատապութիւնը եւ յարակից հարցերը հանգամանալից ներկայացուում են Ներածութեան մէջ: Այստեղ տրուած են ընտրուած թեմայի արդիականութիւնը, կատարուած հետազօտութեան նպատակներն ու խնդիրները՝ հիմնական նպատակը համարելով՝ 2010 թուականից գործող «ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հայ-գերմանական հնագիտական արշաւախմբի ուսումնասիրութիւնների արդիւնքներն օգտագործել՝ համակողմանիօրէն բացայայտելու միջնադարեան Սոթք գաւառում ապրած մարդկանց կեանքն ու կենցաղը, որոշակիօրէն վերականգնելու բնակավայրային,

պաշտպանական եւ հաղորդակցական համակարգերի միջնադարեան պատկերը»: Բացի այդ՝ հատ-հատ ներկայացուած են աշխատանքի գիտական նորոյթները վեց կէտերի մէջ, ուսումնասիրութեան բազմակողմանի ու բազմաբնոյթ մեթոդաբանութիւնը, նրա փորձաքննութիւնը հրատարակուած յօդուածներում, կիրառական նշանակութիւնը եւ ժամանակագրական շրջանակները: Այնուհետեւ պատշաճ կերպով ներկայացուած է նաեւ օգտագործուած աղբիւրների եւ գրականութեան հանգամանալից տեսութիւնը:

Ատենախօսութեան առաջին գլուխը («Սոթք գաւառի պատմաաշխարհագրական նկարագիրը եւ ուսումնասիրութեան պատմութիւնը» խորագրով), որը բաղկացած է երեք ենթագլուխներից, ըստ էութեան հետազօտում է Սոթքի լանդշաֆտը եւ սահմանները, ապա ներկայացնում հանգամանալից պատմական ակնարկ (ըստ անտիկ, հայկական, վրացական, արաբական աղբիւրների), ինչպէս նաեւ գաւառի ուսումնասիրութեան պատմութիւնը:

Ատենախօսութեան երկրորդ գլխում («Միջնադարեան հնագիտական յուշարձանները» վերնագրով), որը բաղկացած է չորս ենթագլուխներից, առատ փաստագրական նիւթի հիման վրայ մանրամասն հետազօտում են Սոթք գաւառի ամրոցները, բնակատեղիները, վանքերն ու եկեղեցիները, գերեզմանոցները: Գլխում մասնաւորապէս ցոյց է տրւում, որ «Պայմանաւորուած Դոփեանների յաջողութիւններով՝ XIII-XIV դդ. խաչքարագործութիւնը վերելք է ապրում, շրջանը վերածւում է Հայաստանի խոշորածաւալ խաչքարերի ամենամեծ կուտակման վայրի: Մէլիք-Շահնազարեանների ռազմա-քաղաքական յաջողութիւնները նպաստում են XV-XVII դդ. խաչքարագործութեան զարգացմանը Սոթքում»:

Ատենախօսութեան երրորդ գլխում («Նյութական մշակոյթը» վերնագրով), որը բաղկացած է երեք ենթագլուխներից, ամբողջական ձեւով ներկայացւում են առանձին՝ Սոթք գաւառի խեղեգործութիւնը, ապա՝ տնտեսական միւս զբաղմունքները եւ դրանց հետ կապուած զտածոները: Չափազանց արժեքաւոր է առանձին անդրադարձը Սոթքի ոսկու հանքի պատմութեանը եւ Շորժայ գիւղի մօտ կանաչ նռնաքարի՝ դահանակ-ուվարովիտի օգտագործմանը միջնադարում: Անպայման նշելի է հեղինակի կարեւոր արձանագրումը. «Սոթք գաւառի բնակավայրերը կարեւոր դեր են խաղացել Դուին-Պարտաւ միջնադարեան առեւտրական ճանապարհի վրայ, որը միացրել է Կուրի եւ Արաքսի միջեւ ընկած

տարածքները»: Աշխատանքում խիստ ուշագրաւ է նաև Սեւանայ լճի՝ որպես նաւագնացութեան միջոցով հաղորդակցական հանգոյցի ուսումնասիրութիւնը:

Ատենախոսության մասին մեր հիմնական դիտողությունները հետեւեալ 12-ն են (այս hսկայածաւալ՝ 361-էջանոց աշխատանքի համար դա շատ չեմ համարում).

1. էջ 23, 200 – Նշուած Դոփեան իշխանը ոչ թէ Գրիգոր Բ-ն է, այլ Գրիգոր Գ («Ձինուորը»): Այդպէս նաեւ՝ նշուած է ոչ թէ Հասան Դ-ն, այլ՝ Գ-ն: Մանրամասն տեսնե՛լ իմ 2020 թ. մենագրութեան մէջ եւ նրան յաւելուած «Խաչէնի իշխանա-արքայատոհմի ճիւղագրութեան» աղիւսակը:

2. էջ 26 – Ոսկանապատ աւանը ոչ թէ Ուտիքում է, այլ Արցախում:

3. էջ 40, 108 – Բերդկունք ամրոցը ոչ թէ Սոթքի լեռնանցքում է, այլ Հայրավանքի մոտիկ քաղաքատեղիում: Նախորդ տեսակէտը վաղուց հնացած է:

4. էջ 45 – «Բակ» – «վանք» եզրոյթների համադրութեան մասին գրելիս ճիշտ կը լինէր յղել իմ գրքերում մանրամասն արուած նոյն դիտարկումը. 2009 թ., էջ 235-236, 2020 թ., էջ 205:

5. էջ 45, 48, … – Կրկնուում է հնացած տեսակէտը, որ Սոթք գաւառի արեւելեան սահմանը չի անցել լեռներից, այնինչ՝ բազմաթիւ աշխատանքներում փաստարկել եմ դեռ Սեդրակ Բարխուդարեանի արտայայտած կարծիքի հաւաստիութիւնը, որ Տրտուի վերնահովիտը եւս մտնում էր Սոթքի մէջ (Ծարից մինչեւ Լեւազետ վտակի գետկիցը):

6. էջ 53, 83 – Գրիգոր Ատրներսեհեանը Սահլ Սմբատեանի որդին չէր, այլ թոռը: Սպրամ իշխանուհին էլ ոչ թէ Սահլի կինն էր, այլ՝ Ատրներսեհի (էջ 56):

7. էջ 83, 87, 175 – Վիմագրերի նորայայտ անունների ցանկից պիտի հանել (կամ գոնէ այդ ցանկը կոչել նորայայտ անունաձեւերի) Սրհանգը: Հմմ. իմ 2020 թ. գրքում, էջ 322. «Դարպասներ տեղավայրի խաչքարի վնասուած բնագիրը. «Ի թվիս :ՈԻԲ: [*=1173 թ.*]. ի հա{յրապե}տութեան տ^եառն^ն /Ստեփանոսի եւ ի *թագաւորո*{ւթեան …[*անջուշտ* ՚*Հասանի – *Ա. Յ.*]}, ես՝ Սրահան/գս, որդի Ջաջռա[յ] {…}, կանգն/եցի զխաչս…»: Տե՛ս *Գ. Յովսէփեան*, Խաղբակեանք կամ Պռոշեանք…, էջ 16; Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 74, հ^մր 217:

8. էջ 107 – Փառիսոսի Դուռն լեռնանցքը տանում էր ոչ թէ Ուտիք, այլ Արցախի Քուստ-ի Փառնէս գաւառը: Լեռնանցքի բարձրութիւնը 3000 մետրից բարձր չէր, այլ 2765 մ (անուշադրութեան վրիպում):

9. էջ 107, 196 – Վայկունիք գաւառը Տրտուի հովտում չէր (Ծար գաւառ), այլ Հակարիի Շալուա օժանդակի հովտում (Քաշաթաղի շրջան), ինչպէս բազմաթիւ աղբիւրներով ցոյց եմ տուել ատենախօսին ծանօթ աշխատանքներում:

10. էջ 188, 191 – Երուանդի եւ Արտաշէսի զօրքերը Ուտիքից եկել են ոչ թէ Սոթքի լեռնանցքներով, այլ Դիլիջանի լեռնանցքով, որը Աղուէ գաւառից անցնում էր Գեղարքունի գաւառ: Ուտիքում նրանք Խաղխաղի արքայական ձմերոցում էին, որից պիտի բարձրանային Աղստեւի հովտով:

11. Գրականութեան ցանկում Մխիթար Գօշի Դատաստանագիրքը պիտի յղուէր 1975 թ. քննական հրատարակութեամբ, այլ ոչ թէ 2001-ի համառօտուած բնագրով: Պակասներից կարելի է նշել Մէլիք-Շահնազարեանների հետ էապէս կապուած Տպէլ աւանի մասին մեր յօդուածը (*Ալ. Յակոբեան, Յակոբ Սիմոնեան*, Դաղիվանքի նորայայտ արձանագրությունը եւ Տպէլի տեղադրութեան հարցը // «Պատմա-բանասիրական հանդէս», Եր., 1998, հ՝ 1-2, էջ 227-232):

12. Վերջապէս՝ լաւ կը լինէր գրել «ժողովածո» եւ «հաւաքածո», քանի որ, ինչպէս մեծ ուսուցիչներն էին սովորեցնում, դրանցում առկայ է «ածո» վերջածանցը (հմմ. «գտածո», «հանածո», այլ ոչ թէ «ածու» բառ-բաղադրիչը, (որի իմաստն է՝ «պարել» եւն, հմմ. «թեկնածու», «ծաղրածու»):

Ինչպէս տեսնում ենք, ատենախօսութեան մէջ շարադրուած առանձին փաստերի հետ կապուած՝ մեր դիտողութիւններն ըստ էութեան առաջարկներ են, որ պիտի նպաստեն սպասուելիք մենագրութեան մէջ վրիպումների բացակայութեանը (անշուշտ, լաւ սրբագրումից յետոյ), որպէսզի հեղինակի աշխատանքը դառնայ է՛լ աւելի կատարեալ (իրօք, ատենախօսից սպասում ենք յաջող պաշտպանութիւնից յետոյ առաջիկայ հետազօտութիւններում նոր գիտական յաջողութիւններ):

Այսպիսով՝ Աւետիս Գրիգորեանի գրախօսուող թեկնածուական ատենախօսութիւնը արժեքաւոր, յաջողուած պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն է, որն ամբողջական պատկերացում է տալիս խնդրոյ առարկայ տապածաշրջանի մասին, մատնանշում նրա հետազօտման կարեւորութիւնը Հայոց պատմութեան կարեւորագոյն հարցերի խոր ընկալման գործում: Այն գրուած է բաւարար գիտական կոռեկտութեամբ, անսխալ, հաճելի ընթերցուող հայերէնով, շարադրանքը համոզիչ է,

յստակ ու տրամաբանական: Յաւելենք նաեւ, որ աշխատանքի 18-էջանոց Սեղմագիրը կազմուած է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան եւ ամբողջապէս արտացոլում է աշխատութեան բովանդակութեանը (այդպէս նաեւ՝ սեղմագրի վերջում տրուած ռուսերէն ու անգլերէն ամփոփումները): Ատենախօսութեան բոլոր դրոյթները լուսաբանուած են հեղինակի եւ իր հեղինակակիցների հրատարակած 1 գրքում ու 13 յօդուածներում: Խիստ տպաւորիչ են աղբիւրների եւ գրականութեան պատկառելի ցանկը (24 էջ)՝ հայերէն եւ օտարալեզու սկզբնաղբիւրներով ու մասնագիտական, գրականութեամբ, եւ յատկապէս՝ ատենախոսության ծաւալուն Յաւելուածները, որ սկսւում են քրեստոմատիկ աղբիւրագիտական հատուածով (պատմիչների ու յիշատակագիրների դրուագներով, նորայայտ վիմագրերի ու վաւերագրերի բնագրերով) եւ շարունակւում բազմաթիւ քարտէզներով ու աղիւսակներով: Ի դէպ, չմոռանանք նշել նաեւ գործընկերային յաջող աշխատանքը՝ հեղինակակիցների, արտասահմանեան մասնագէտների, «Էրեբունի» թանգարանի հետ եւ այլն:

Ամփոփելով՝ Աւետիս Գրիգորեանի «Սոթք գաւառը միջին դարերում ըստ պատմահնագիտական տուեալների» աշխատութիւնը կարելի է լուրջ աւանդ համարել հայագիտութեան մի կարեւոր բնագաւառում, որը նկատելի օգտակարութիւն կ՚ունենայ հետագայ բոլոր հետազօտողների ու նաեւ քաղաքական-պետական շրջանակների համար: Բնականաբար, այն կարող է օգտագործուել նաեւ դասագրքերի, տեսական-գործնական ձեռնարկների եւ ամփոփիչ աշխատանքների շարադրանքի մէջ:

Աւարտելով պաշտօնական կարծիքս՝ յայտնում եմ յարգարժան գիտխորհրդին, որ սոյն աշխատանքը իր գիտական պատշաճ մակարդակով, առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուած ծաւալուն նիւթերի հմտալից քննութեամբ, ուշագրաւ դիտարկումներով ու հարցադրումներով, իր բերած գիտական նորոյթներով եւ կատարուած մանրազնին հետազօտական աշխատանքի մեծ ծաւալով ամբողջապէս բաւարարում է թեկնածուական ատենախօսութիւններին առաջադրուող պահանջներին, ուստի նրա հեղինակը լիովին արժանի է Է.00.03 «Հնագիտութիւն» մասնագիտութեամբ պատմական գիտութիւնների թեկնածուի աստիճանին: Ելնելով դրանից՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 007 մասնագիտական խորհրդին առաջարկում եւ միջնորդում եմ՝ ներկայացուած ատենախօսութեան հեղինակ Աւետիս

Լորիսի Գրիգորեանին շնորհել իր հայցած պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտօնական ընդդիմախօս, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Քրիստոնեայ Արեւելք բաժնի վարիչ, պ. գ. դ.՝

Ալեքսան Յակոբի Յակոբեան

Պատմական գիտ. դոկտոր Ա. Յ. Յակոբեանի ստորագրութիւնը հաստատում եմ.

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական քարտուղար՝

Եւա Յարութիւնեան

20.05.2023 թ.